ԱՐԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- 2014թ **գարնանը** զինակոչային հասակի /1998թ ծնված/ պատանիները ներկայացվել են էջմիածնի զինվորական կոմիսարիատ՝ բժշկական հետազոտման, **գյուղապետարանը** անմիջական աջակցություն է ցուցաբերվել գարնանային զորակոչին, ապահովել է զինապարտների ակտիվ մասնակցությունը Հայկական բանակի զորավարժանքներին:
- Մանկապարտեզի աշխատանքները կոորդինացնելու, ժամանակին ու անթերի կազմակերպելու համար 2014թ տրամադրվել է, որպես սուբսիդիա՝ 7 700 000դրամ /ուղղվել է աշխատավարձի, կոմունալ ծառայությունների, սննդի , նորոգումների և սարքավորումների ձեռք բերմանը/:
- 2014թ. **առաջին կիսամյակում** գյուղապետարանը բնակիչներից ստացել է 61 դիմումներ, որոնք քննարկվել են և ժամանակին տրվել են պատասխաններ: Գյուղապետարանը բնակիչներին տվել է 422 տեղեկանք, ստացվել է 137պաշտոնական նամակներ, բոլորն էլ քննարկվել և ժամանակին պատասխանվել են 133 նամակներով, գումարվել է ավագանու 6 նիստեր, համայնքի ղեկավարի 8 կարգադրություններ և ընդունել է 32 որոշումներ:
- Մերձավան համայնքի 2014թ. տարեկան ֆոնդային բյուջեն կազմում է 34760200դրամ, ծախսային մասը կազմել է 9107300դրամ:
- Մշակույթի տան **նկուղային հարկի վերանորոգման** նախագծահաշվային փաստաթղթերի **կազելու** համար տրամադրվել է 450000դրամ գումար:
- Համայնքի սոցիալապես անապահով 48 **ընտ**անիքներին տրամադրվել է 3385000դրամ դրամական օգնություն, Մերձավանցի նորածին 12 երեխաների ծնողներին՝ 50000-**ական դրամ**, **ընդամենը** հատկացվել է 600000դրամ:
- Ժամանակին կատարվում է երեխաների բժշկական պրոֆիլակտիկ պատվաստումները, հաշմանդամության կարգ ունեցող բնակիչները և 0-7 տարեկան հիվանդ երեխաները ստանում են իրենց անհրաժեշտ, անվճար դեղորայքը:
- **2014թ առաջին կիսամյակում գյուղապետարանի տանիքի վերանորոգման և ծածկոցների պատրաստման նախագծերի պատրաստման համար ծախսվել է** 550000 **դրամ և կառուցման համար ծախսվել է** 7 3687 900**դրամ**:
- Ա/Ձ տնօրեն Պայքար Գրիգորյանի անհատական նախաձեռնությամբ կատարվել է համայնքի մշակույթի տան ֆուտբոլի դաշտի հողի հարթեցման աշխատանքներ, ծախսել է մոտ 8000000դրամ գումար և գյուղապետարանի միջոցներից ծախսվել է 636000դրամ գումար:
- 2014թ . **առաջին կիսամյակում** համայնքի խաղահրապարակում տեղադրվել է հինգ տարբեր տեսակի մանկական խաղեր՝ 738400դրամ արժողության, Մասիսի փողոցում՝ մոտ 200 քառակուսի մետր տարածություն հարթեցվել **և տեղադրվել է մանկական խաղեր՝** 330000**դրամ արժողության**:
- Մերձավան համայնքի ֆուտբոլային թիմը մշտապես մասնակցում է հանրապետական, մարզային առաջնություններին, ֆուտբոլի փնջային մրցաշարերին և բազմիցս արժանացել է պատվոգրերի:
- Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան «Մերձավան-98» թիմին 2013-2014թթ Հայաստանի ֆուտբոլի մանկապատանեական Մ-16/Ա/ առաջնությունում զբաղեցրել **է երկրորդ՝ պատվավոր տեղը**: Բոլոր միջոցառումների կազմակերպմանը և մասնակիցների տեղափոխմանը աջակցել է գյուղապետարանը:
- Գյուղապետարանը ,,Կանանց միջազգային օրվա,, և ,,Մայրության, գեղեցկության,, օրվա կապակցությամբ գյուղապետարանի, փոստի, մանկապարտեզի, մշակույթի

տան, բուժ անբուլատորիայի աշխատակիցների նվերների գնման համար ծախսել է 255 000 դրամ:

- Մերձավան համայնքից Արցախյան ազատամարտում զոհվածների ընտանիքների և կին ազատամարտիկների համար, մայրաքաղաքի Հ. Պարոնյանի անվան թատրոնում կազմակերպված Արցախյան ազատամարտի կին մասնակիցներին նվիրված համերգի տոմսեր են գնվել:
- Քաղաքացիների , ինչպես նաև «Երկրագործության և բույսերի **պաշտպանության»** գիտական կենտրոն ՊՈԱԿ աշխատակիցների, դիմումների հիման վրա դարձյալ կատարվել է համայնքի բնակիչների և այգեգործական ընկերության անդամների հողակտորների չափագրման և սահմանների ճշտման աշխատանքներ:

Համայնքում **շարունակում է գործել** ,,Արեգակ,, վարկավորման ծրագիրը, մասնակիցների թիվը շարունակական ավելանում է, որը համայնքի կին բնակիչներին հնարավորություն է տալիս զարգացնելու իրենց բիզնեսը:

Առաջին կիսամյակում համայնքում աղբահանման աշխատանքները կազմակերպելու համար փոխանցվել է 1000000դրամ, այն կատարվում է շաբաթական **վեց** անգամ.

Համայնքի երիտասարդության փողոցի և մշակույթի տան բակի գիշերային լուսավորությունը անցկացվել է և ծախսվել է 550000 դրամ գումար: Հաճախակի փոխվում է գիշերային լուսավորության վառված լամպերը, ծախսվել է 100000 դրամ:

Համայնքի գերեզմանեցի հանգստյան քարի շուրջ տեղադրվել են նստարաններ:

2014թ առաջին կիսամյակում գյուղապետարանի աշխատակազմի աշխատավարձերի ներդրմամբ, Մերձավան համայնքի կենտրոնական խմելու ջրագիծի /1600 գծամետր երկարությամբ, 110սմ խորությամբ/ կառուցման, համար կատարվել է հողային աշխատանքները:

Համայնքի կոյուղին շատ հին է և հաճախակի նորոգման կարիք է ունենում՝ 2014 թվականի **առաջին կիսամյակում** շուրջ 200 գծամետր կոյուղու ջրագիծ է մաքրվել՝ ծախսվել է 200000 դրամ:

- Գյուղապետարանը, ժամանակին կազմել և ներկայացրել է բոլոր հաշվետվությունները ըստ պատկանելիության :
- Գյուղապետարանը մշտապես աջակցում է բնակչության էլեկտրամատակարարման, խմելու ջրի սպասարկման, ոռոգման ջրի մատակարարման, գազամատակարարման, կոյուղու սպասարկման ծառայություններ իրականացնող աշխատակիցներին:

2014թ-ին համայնքի հիմնախնդիրներն են.

1. Դպրոցի վերանորոգում:
2. Ոռոգման համակարգի որոշակի հատվածի վերակառուցում:
3. Փողոցների մասնակի ասֆալտապատում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ